ԿՐՕՆԱԿԱՆ–ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՑ ՁՕՐՈՒԹԻՒՆԸ.

(Փոխադրութիւն Նաումանից)

Դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զնա.
Մատթ. ԺԶ. 18

Ինչու մարդիկ չեն կարողանում եկեղեցուց բաժանուել, թէպէտ շատ շատերը կցանկային։ Հարիւր տարուց աւելի է, որ խօսում են նորա անցման մասին։ Երբեմն թւում էր, թէ եկեղեցական հաւատի վերջն է։ Քաղաքացիական ազատամտութիւնը նոր կրթութիւն և նոր մտքեր ժողովրդի մէջ. վախկոտ քրիստոնեաներ վերջացած համարելով ժողովրդական եկեղեցու քայքայումը, հեռացան և խորասուզուեցան առանձնական քրիստոնէութեան մէջ։ Բայց նրանց երկիւղն ու կասկածը վաղամեռ էր։ Քաղաքացիական օրէնսդրութիւնը դուռ բաց արաւ մի նոր հեթանոսութեան համար, բայց այդ նոր հեթանոսութիւնը չեկաւ։ Այժմ այլ ևս ոչ մի խելքը գլխին մարդ չի հաւատում, թէ ազատամտութիւնը կարող է կործանել եկեղեցին։ Գուցէ սոցիալիստները կանեն այդ։ Մի ժամանակ այնպէս էր երևում, թէ եկեղեցիները հետզհետէ պէտք է ամայութեան ենթարկուեն։ Փորձեր կատարուեցան խմբեր հանելու, հրաժարեցնելու եկեղեցուց։ Բայց այդ փորձերն ապարդիւն անցան և այժմ ոչ ոք չի մտածում նման փորձեր կատարելու։ ԺԹ. դարու վերջում եկեղեցիները աւելի լիքն են քան սկզբում (խօսքը Եւրոպայի մասին է)։ Դժոխքի դռները չկարողացան նրան յաղթահարել։

Եկեղեցուց այս յաղթութիւնը հեշտ հասկանալի կլինէր, եթէ նա այդ յարձակման և քննադատութեան շրջա-

նում ստեղծագործական մի նոր հոգով լցուած լինէր, ոգևորուած նոր գաղափարների զօրութեամբ, յաղթական ընթացք բռնէր թշնամիների և հակառակորդների միջով։ Բայց նորա բարեկամներն իսկ այդ հաստատել չեն կարող։ Եկեղեցին եռանդուն կերպով աշխատել է հաւատարմութեամբ ծառայել, իւր ձևով ընկերութիւններ է կազմել, ներքին և արտաքին առաքելութիւնը զարգացրել, կապ հաստատել ժողովրդի հետ, բայց մեծ և հզօր ներշնչում, որ նոր գարուն բերէր, չէ ունեցել։ Եկեղեցւոյ այդ ժամանակուայ գործունէութիւնը կարելի է Մաղմոսի—Երթալով երթային և լային, ոչք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց—խօսքերով բնորոշել։ Անցեալ դարու այս մաքառման շրջանումն ևս քրիստոնէութեան մէջ քիչ չէին թերութիւնները՝ անմիաբանութիւնն ու վախկոտ երևոյթները։ Բայց և այնպէս նա չնուազեց. նոր հոսանքների ալիքները նորա թումբերը քանդել չկարողացան։ Ի՞նչն է այս զօրութեան պատճառը։

Այդ զօրութիւնը ոչ եկեղեցական կազմակերպութեան և ոչ պետական—եկեղեցական օրէնսդրութեան մէջն է։ Եկեղեցականների սրտում իսկ այնքան տեղ չեն բռնում այդ բաները, ևս առաւել հեռաւորների, որոնք կոչմամբ կապուած չեն եկեղեցու հետ։ Եթէ եկեղեցու մէջ սրանցից զատ մի ուրիշ մեծութիւն կենդանի մնացած չլինէր, արտօնութիւններն ու կալուածները նրան պահել չէին կարող։ Եթէ բոլոր արտաքին պաշտպանութիւններն էլ վերցուին, եկեղեցին չի կործանուի, գուցէ աւելի ևս ծաղկէ։ Եկեղեցու կենդանութեան աղբիւրը այն յաւիտենական իւղի կաթիլներն են, որով նոյն իսկ եկեղեցւոյ ամենավատթար քահանաները օծուած են։ Թիսուս այնպէս մնայուն է և յաւիտենական, որ ամենավատ պաշտօնեաներն էլ նրան կործանել չկարողացան։ Նա ապրում է, նրանով էլ ապրում են նորա բոլոր լաւ և վատ սպասաւորները։

Չկայ աւելի տարօրինակ բան, քան եկեղեցու և Թիսուսի մէջ եղած յարաբերութիւնը։ Թիսուս եկեղեցական կազմակերպութեան հակառակ էր, խիստ կերպով մաքա-

ռեց նորա դէմ և այդ կազմակերպութեան ձեռքով խաչուեցաւ, բայց նա մի և նոյն ժամանակ յաւիտենական և անսասան հիմնաքար դարձաւ նոր և ամենամեծ եկեղեցականութեան (Kirchenthun), աղբիւր, որով պապերը, եպիսկոպոսները, բոլոր երկրների քահանաները իրենց հանգերը ստացին։ Եւ հնարաւոր է արդեօք քարոզել Յիսուսի մասին առանց եկեղեցականութեան։ Կարելի է հալած ոսկին տեղից տեղ փոխադրել առանց երկաթի անօթների։ Եկեղեցուց բաժանուել չի կարելի միայն նորա համար, որովհետև Յիսուս յաւիտենական է։

Գ. վ. Յովսէփեան